



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճեններ և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2073

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՈՒԹԻՒՄ ՄԻԱՅԵՐ.

Վ. Ի. Լենին

ՊՈԽՈԱԿՈՆ  
ՍՈՅԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐԻ  
ՖՈԳԻՐՆԵՐԸ

ԿՈՒԶՐԱՏ

1932

ՅԵՐԵՎԱՆ

3K23  
R-95

111 SEP 2013

20 NOV 2009  
01 JUN 2005

3 UK 23  
8-95

47

Պրոլետարյան քալոր յերկիրների, միացե՛ք.

Վ. Ի. ԼԵՆԻՆ

Թ Ո Ւ Ս Ա Կ Ա Ն  
Մ Ո Ց Ի Ա Լ - Դ Ե Մ Ո Կ Ր Ա Տ Ա Ե Ր Ի  
Խ Ն Գ Ի Ր Ն Ե Ր Ը

1134



• O H U Z R U S

1932

3 b 1 b 4 u 2

90-ական թվականների լերկրորդ կեսը բնորոշվում է ռուսական հեղափոխական հարցերի զրոյան և նրանց լուծման նկատին աշխաժուժությամբ։ Նարոդապրավականների նոր հեղափոխական կուսակցության հրապարակ գալը, սոցիալ-դեմոկրատների աճող ազդեցությունն ու հաջողությունները, նարոդավոլյականության ներքին եվոլյուցիան, — այս ամենն առաջ բերեց ծրագրային հարցերի աշխաժուժ քննարկում թե սոցիալիստ-ինտելիգենցիաների, ու բանվորների խմբակներում և թե անլեզակ զրականության մեջ։ Վերջնիս բնագավառում արժե մատնանշել «Ժողովրդական իրավունքի» կուսակցության «Հասցնայ вопрос» ը և «Մանիֆեստ»-ը (1894), «Լետучий листок группы «Народной воли», «Ռուսական սոցիալ-դեմոկրատների միության»\* կողմից հրատարակվող արտասահմանչան «Պատուհակ»-ը, Ռուսաստանում հեղափոխական բրոցուրների, զրւիավորապես բանվորների համար, հրատարակության ուժեղացող գործունեյությունը, «Բանվոր գասակարգի ազատագրման պայքարի միության»\*\* ագիտացիոն գործունեյու-

\* «Ռուսական սոցիալ-դեմոկրատների միությունը» սուսական սոցիալ-դեմոկրատների արտասահմանյան կազմակերպությունն է, վոր հիմնված է 1894 թ. վերջում «Աշխատանքի աղատազրման» խմբակի նախաձեռնությամբ։ Խմբակի աշխատացիոն գործունեյության

\*\* «Գետերբուրգյան «Բանվոր գասակարգի ազատագրման պայքարի միությունը» կազմակերպելու եր գետես 1894—1895 թ. ձմռանը, բայց իր անունն ընդունեց մայիս 1895 թ. զեկտեմբերին, լենինի ոլխավորած՝ իր հիմնական կորիզի (Կրժիժանովսկի, Զավարոսեց, Վանեյեվ և մյուսներ) ձերբակալությունից հետո արդեն Բանվորման նոտած լենինը և մյուսներ չելին կտրում «Միության» վառ իրենց ունեցած զեկավարությունը, բանտից ռւղարկում ելին թուուցիկներ, գրքույշկներ և այլն։

թյունը Ս.-Պետերբուրգում՝ կապված 1896 թ. պետերբուր-  
գյան նշանավոր գործադրությունների հետ և այլն:

Ներկայումս (1897) թ. վերջը) մեր տեսակետով ամենա-  
կենական հարցը համարկանում եւ սոցիալ-դեմոկրատների  
պրակտիկ գործունեյության վերաբերյալ հարցը։ Մենք  
ընդգում ենք սոցիալ-դեմոկրատիզմի պրակտիկ կողմը, վո-  
րովինեան նրա թեորիական կողմը, ըստ ինքնույթին, արդեն  
առարել ե հակառակորդներին համառորեն չհասկանալու և նոր  
ուղղությունը հենց ինքնան գալուն պես ճնշելու սաս-  
տիկ ձգումների ամենասուր շրջանը՝ մեկ կողմից և սոցիալ-  
դեմոկրատիզմի հիմունքների շերմ ինքնապաշտպանության  
ամենասուր շրջանը՝ մյուս կողմից։ Այժմ սոցիալ-դեմոկրատ-  
ների թեորիական հայացքներն իրենց զլիստիք ու հիմնա-  
կան գծերով բավականաշափ պարզված են, Զի կարելի նույնն  
ասել սոցիալ-դեմոկրատիզմի պրակտիկ կողմի, նրա քաղա-  
քական ձրագրի, նրա գործունեյության լեզանակների, նրա  
տակտիկայի մասին։ Հենց այս բնագավառումն ե, վոր, մեր  
կարծիքով, ամենից շատ տիրում են թյուրիմացություններ  
և փոխագա՞ծ չհասկացողություն, վորն արգելք ե հանդի-  
սանում, վոր սոցիալ-դեմոկրատիզմին ամբողջապես մոտեն-  
անան այն հեղափոխականները, վորոնք թեորիայում (իովին  
հրաժարվել են նարոդավոլյականությունից, իսկ պրակտի-  
կայում իրերի բերմամբ կամ մոտենում են բանվորների  
մեջ պրոպագա՞ն դ և ագիտացիա մղելուն, նույնիսկ ավելին՝  
դրասակարգային։ Կովի հողի վրա բանվորների մեջ իրենց  
գործունելությունը հաստատելուն։ — կամ ձգտում են ամբողջ  
ծրագրի և ամբողջ հեղափոխական գործունեյութան հիմքում  
դա ել դեմոկրատական խնդիրները։ Յեթե չենք սխալգում,  
վերջին բնութագրությունը համապատասխանում ե այն  
իրակու հեղափոխական խմբակներին, վորոնք ներկայումս  
Ռուսաստանում սոցիալ-դեմոկրատների հետ միասին գոր-

ծում են, այսինքն՝ նարոդավոլյականներին և նարոդա-  
պրավականներին։

Ուստի մեզ թվում ե, վոր առանձնապես ժամանակին ե  
սոցիալ-դեմոկրատիայի պրակտիկ խնդիրները պարզաբանե-  
լու և այն հիմունքները շարադրելու փորձը, վորոնցով մենք  
նրանց ծրագիրը համարում ենք յեղած յերեք՝ ծրագրերից  
ամենառաջիշտները, իսկ նրա գեմ յեղած առարկությունները՝  
զգալի չափով հիմնված թյուրիմացության վրա։

Սոցիալ-դեմոկրատների պրակտիկ գործունեյությունը,  
ինչպես հայտնի լի, իրեն խնդիր ե առաջադրում զեկավա-  
րելու պլուտօտարիատի դասակարգային պատքարը և կազմա-  
կերպելու այդ պատքարը նրա յերկու արտահայտություն-  
ներում, այն է սոցիալիստական (այն կոիվը կապիտալիս-  
տական դասակարգի գեմ, վորը ձգտում ե տակալի դասա-  
կարգային հասարակակարգը և կազմակերպել սոցիալիստա-  
կան արտադրություն) և դեմոկրատական (այն կոիվը ար-  
սուլուտիզմի գեմ, վորը ձգտում ե Ռուսաստանի համար  
քաղաքական ազատություն նվաճել և Ռուսաստանի քաղա-  
քական ու հասարակական կարգը զեմոկրատացնել)։ Մենք  
ասինք՝ ինչպես հայտնի լի։ Յեկ իսկապես, հենց սկսած իր  
ինքնան գալուց, իրեկ հատուկ սոցիալական-հեղափոխա-  
կան ուղղություն, ուստական սոցիալ-դեմոկրատները միշտ  
լիակատար պարզուցությամբ մատնանշել են իրենց գործու-  
նեյության ալդապիսի խնդրի վրա, միշտ ընդդեմ են պրոլե-  
տարիատի դասակարգային կովի յերկակի արտահայտու-  
թյունն ու բովանդակությունը, միշտ պնդել են իրենց սո-  
ցիալիստական և դեմոկրատական խնդիրների անխողելի կա-  
պի վրա, — այն կապի, վորն ակներկ արտահայտված և  
նրանց կողմից ընդունված անվան մեջ։ Այնուամենաւնիվ  
մինչև այժմ ել դուք հաճախակի այնպիսի սոցիալիստաների  
յեք հանդիպում, վորոնք խիստ այլանդակ պատկերացում  
ունեն սոցիալ-դեմոկրատների մասին, մեղադրելով նրանց

քաղաքական կոիվ անտեսելու մեջ և այլն։ Մի փոքր եւ կանգ առնենք ուստական սոցիալ-դեմոկրատիայի պրակտիկ գործունելության յերկու կողմերի բնութագրու շահ վըաւ:

Սկսենք սոցիալիստական գործունելությունից, Սկսած այն ժամանակից, յերբ Ս.-Պետերբուրգում սոցիալ-դեմոկրատական հիմնվոր դասակարգի ազատագրման պայքարի միությունը՝ պետքրուրդյան բանվորների մեջ զրակորեց իր գործունելությունը, սոցիալ-դեմոկրատական գործունելության բնույթն այդ տեսեակետից, թվում ե, թե պետք ե լիովին պարզ լիներ, Ուստական սոցիալ-դեմոկրատների սոցիալիստական աշխատանքը՝ զիտական սոցիալիզմի ուսմունքների պրոպագանի ե, բանվորների մեջ ձիւտ ըմբռունողություն տարածելն ե՝ ժամանակակից հասարակական-տնտեսական կարգի մասին, նրա հիմունքների և նրա զարգացման մասին, ուստական հասարակության զանազան լասակարգերի մասին, նրանց փոխհարաբերության մասին, այդ դասակարգերի միմյանց դեմ մղվող պայքարի մասին, այդ պայքարում բանվոր դասակարգի ունեցած դերի մասին, նրա վերաբերմունքը դեպի ընկնող և զարգացող դասակարգերը, դեպի կապիտալիզմի անցյալն ու ապագան, միջազգային սոցիալ-դեմոկրատիայի և ուստական բանվոր դասակարգի պատճական խնդրի մասին, Պրոպագանի հետ սելտորեն կապված ե բանվորների մեջ ազիտացիա մղելը, բնակչության այն առաջ շարժելով առաջին պլանի վրա, Ուստաստանի ժամանակակից քաղաքական պայմանների և բանվորական մասսաների զարգացման ժամանակի, Բանվորների մեջ մըդցող ազիտացիան այն ե, վոր սոցիալ-դեմոկրատները մասնակցում են բանվոր դասակարգի պայքարի բոլոր տարերին արտահայտություններին, աշխատանքային որվա, աշխատավարձի, աշխատանքի պայմանների և այլն և այն պատճառներով բանվորների և կապիտալիստների միջև տեղի ունեցող ընդհարումներին։ Մեր խնդիրն ե՝ մեր գործու-

նելությունը միաձուլել բանվորական կյանքի պրակտիկ, կենցաղային հարցերի հետ, ոգնել բանվորներին՝ հասկանալու արդ ինդիրները, բանվորների ուշագրությունը դարձնել ամենակարևոր չարարկությունների վրա, ոգնել նրանց ավելի ճիշտ և ավելի գործնականորեն ձևակերպելու իրենց պահանջները՝ տերերի հանդեպ, բանվորների մեջ զարգացնել իրենց համերաշխության գիտակցությունը, բոլոր ուստական բանվորների, իրեւ պրոլետարիատի համաշխարհային բանակի մի մասը կազմող միասնական բանվոր դասակարգի, ընդհանուր շահերի և ընդհանուր գործի գիտակցությունը, Բանվորների մեջ խմբակներ կազմակերպելը, նրանց և սոցիալ-դեմոկրատների կենտրոնական խմբակի միջն կոնսպիրատիվ հարաբերություններ ստեղծելը, բանվորական գրականության հրատարակելն ու տարածելը, բանվորական շարժման բոլոր կենտրոններից թղթակցություններ կազմակերպելը, ազիտացիոն թուուցիկներ և պրոկլամացիաներ հրատարակելն ու նրանց տարածելը, փորձված ազիտատորների կոնտինգենտ պատրաստելը, — ընդհանուր գծերով սրանք են ուստական սոցիալ-դեմոկրատիալի սոցիալիստական գործունելության արտահայտությունները։

Մեր աշխատանքն ամենից առաջ և ամենից ավելի ուղղված ե ֆարբիկա-գործարանային, քաղաքային բանվորների կողմը։ Ուստական սոցիալ-դեմոկրատիան չպետք ե իր ուժերը ջլատի, նա պետք ե կենտրոնանա արդյունաբերական պրոլետարիատի մեջ կատարվող գործունելության վրա, վորն ամենից հեշտ ե ըմբռնում սոցիալ-դեմոկրատական գաղափարները, վորը մտավորապես և քաղաքականապես ամենից ավելի զարգացած ե, վորն իր թվով և յերկրի խոշոր քաղաքական կենտրոններում համակենտրոնացման ամենից կարևորն ե։ Այդ պատճառով ֆարբիկա-գործարանային, քաղաքային բանվորների մեջ ամուր հեղափոխական կազմակերպություն ստեղծելը սոցիալ-դեմոկրատիալի առաջին և

կենսական խնդիրն, և այն խնդիրը, վորից ներկայումս հրաժարվելը մեծ չափով վոչ-բանական կլիների: Սակայն իր ուժերը ֆարբիկա-գործարանային բանվորների վրա կենտրոնացնելու անհրաժեշտությունն ընդունելով, դատապարտելով ուժերի ջատումը, յերբեք չենք ուղում ասել, վոր ուսական սոցիալ-դեմոկրատիան անդիտանա ուսական պրոլետարիատի և բանվոր դասակարգի մյուս խավերը, վճ յերբեք: Ծուսական գործարանային բանվորը հենց ըստ իր կյանքի պայմանների հարկադրված և ամեն քայլափոխում ամենասերտ հարաբերության մեջ լինել տնախնագործների—գործարանից դուրս քաղաքներում և գյուղերում թափված և ավելի վատթար պայմաններում դրված այդ արդյունաբերական պրոլետարիատի հետ: Ծուսական գործարանային բանվորն անմիջական շփման մեջ և նաև զյուղական բնակչության հետ (գործարանային բանվորը հաճախ գյուղում ունի ընտանիք) և հետեապես, չի կարող մոտիկ չլինել նաև գյուղական պրոլետարիատին, պրոֆեսիոնալ բատրակների և որածակների բազմամիլիոն մասսային, ինչպես և այն քայլաված գյուղացիությանը, վորը կառչած լինելով իր չնչին հողակտորին, զբաղված և աշխատավճարումներով և ամեն տեսակի պատահական «զատումներով», այսինքն նույն վարձու աշխատանքով: Ծուսական սոցիալ-դեմոկրատները վաղաժամ են համարում իրենց ուժերն ուղղել տնայնադորձների և զյուղական բանվորների միջավայրը, սակայն նրանք յերբեք մտադիր չեն անուշաղության մատնելու այդ միջավայրը և կաշխատեն առաջավոր բանվորներին լուսավորել թե տնայնադորձների և թե գյուղական բանվորների կենցաղի հարցերի վերաբերյալ, վորպեսզի այդ բանվորները՝ շփման մեջ մտնելով պրոլետարիատի ավելի հետամտաց խավերի հետ, նրանց մեջ մտցնեն դասակարգային պայքարի, սոցիալիզմի և ուսական դեմոկրատիայի քաղաքական խնդիրների դաշտարանի մյուս գործարանական հետապես աշխատանքը ընդհանրապես և

ուսական պրոլետարիատինը՝ մասնավորապես: Անգործնական ե տնայնագործների և գյուղական բանվորների մոտ ազիտատորներ ուղարկել քանի դեռ ֆարբիկա-գործարանային և քայլաքային բանվորների մեջ այդպիսի շատ աշխատանք է մնում կատարելու, սակայն շատ դեպքերում սոցիալիստրոնվորը, անկախ իր կամքից, շփմում և այդ միջավայրի հետ, և նա պետք է կարողանա ոգտվել այդ դեպքերից և հասկանալ սոցիալ-դեմոկրատիայի ընդհանուր խնդիրները Ծուսաստանում: Այդ սկանառով խորապես մոլորվում են նրանք, ովքեր ուսական սոցիալ-դեմոկրատիային մեղադրում են սահմանափակվածության մեջ, միմիայն ֆարբիկա-գործարանային բանվորների պատճառով աշխատավոր բնակչության մասսային անտես առնելու ձգտման մեջ: Ընդհակառակը, պրոլետարիատի առաջավոր խավերում ազիտացիա մղելը նաև ամբողջ ուսական պրոլետարիատին արթնացնելու (շարժման ծավալման չափով) ամենաճիշտ և միակ ուղին ե: Սոցիալիզմի և դասակարգային կովի գաղափարների տարածումը քայլաքային բանվորների մեջ՝ անխուսափելիորեն այդ գաղափարները կտարածի նաև ավելի մանր և ավելի ճյուղավորված առուներով: դրա համար անհրաժեշտ ե, վոր մատնանշված գաղափարները խորն արմատներ գցեն ավելի պատրաստված միջավայրում և հազեցնեն ուսական բանվորական շարժման և ուսական հեղափոխության այդ ավանդաբին: Ուղղելով իր ամբողջ ուժերը գեպի ֆարբիկա-գործարանային բանվորների մեջ կատարվող գործունեյության վրա, ուսական սոցիալ-դեմոկրատիան պատրաստ և աջակցել այն ուսական հեղափոխականներին, վորոնք գործնականում մոտենում են սոցիալիստական աշխատանքը պրոլետարիատի դասակարգային կովի հողի վրա դնելուն, ըստ վորում յերբեք չթագցնելով, վոր պրակտիկ միությունները հեղափոխականների մյուս ֆրակցիաների հետ, չեն կարող և չպետք

միսների և զիջողությունների տաճեն թերիայում, ծրագրում, դրագրում: Համոզված լինելով այն բանում, վոր հեղափոխական շարժման համար իրեւ գրոշ ծառալող հեղափոխական թերիան կարող է լինել ներկայումս սիմիայն զիտական սոցիալիզմի և գասակարգակին կովի ուսմունքը, ուստական սոցիալ-դեմոկրատներն ամրող ուժերով պետք է տարածեն այն, պաշտպանեն կեղծ մեկնաբանություններից, ապստամբեն գեռես լերիտասարդ բանվորական շարժումը Ռուսաստանում սակավ վորոշ դոկտրինների\* հետ կապելու բոլոր տեսակի փորձերի գեմ: Թերիական ըմբռնություննապացում են, իսկ սոցիալ-դեմոկրատների պրակտիկ գործունելությունը ցույց է տալիս, վոր բոլոր սոցիալիստները Ռուսաստանում պետք է դառնան սոցիալ-դեմոկրատներ:

Անցնում ենք սոցիալ-դեմոկրատների դեմոկրատական խնդիրներին և դեմոկրատական աշխատանքին: Նորից ենք կրկնում, վոր այդ աշխատանքը սերտուն կապվում է սոցիալիստական աշխատանքի հետ: Բանվորների մեջ պրոպագանդ մրելով, սոցիալ-դեմոկրատները չեն կարող անտես առնել քաղաքական հարցերը և նրանց անտես առնելու կամ հույնիսկ նրանցից հեռանալու ամեն մի փորձ կհամարելին մեծագույն միավալ և նահանջ համաշխարհային սոցիալ-դեմոկրատիզմի հիմնական գրություններից: Գիտական սոցիալիզմի պրոպագանդի հետ միասին ուսւական սոցիալ-դեմոկրատները իրենց խնդիր են գնում՝ նաև դեմոկրատական գաղափարների պրոպագանդը բանվորական մասսաների մեջ, տարածել հասկացողություն արսոլյուտիզմի մասին՝ նրա գործունելության ամեն տեսակի արտահայտություններում, որա գասակարգային բովանդակության մասին, նրան տաղակելու անհրաժեշտության մասին, բանվորական գործի համար հաջող պայքար մրելու անհնարինության մասին՝

\* Ուսմունքների: Խմբ.:

առանց քաղաքական ազատություն նվաճելու և Ռուսաստանի քաղաքական ու հասարակական կարգերը գեմոկրատացնելու: Մոտակա տեսեսական պահանջների հողի վրա բանվորների մեջ ազիտացիա մղելով սոցիալ-դեմոկրատները դրա հետ սերտորեն կապում են նաև բանվոր գասակարգի մոտակա քաղաքական կարիքների, թշվառությունների և պահանջների հողի վրա մզգող ազիտացիան, — ազիտացիան՝ վոստիկանական ծաման գեմ, վորն արտահայտվում է լուրաքանչյուր գործադրությում, բանվորների լուրաքանչյուր ընդհարման մեջ՝ ընդդեմ կապիտալիստների, — ազիտացիան՝ բանվորների, ընդհանրապես վորպես ուսւական քաղաքացիների և մասնավորապես վորպես ամենաճնշված և ամենաիրավագործ դասակարգի, իրավունքների բոնադատության գեմ, — ազիտացիան՝ այն արսոլյուտիզմի լուրաքանչյուր ականավոր ներկայացուցչի և լակելի գեմ, վորն ամենամոտիկ շվման մեջ և մտնում բանվորների հետ և ակների ցույց և տալիս բանվոր դասակարգին նրա քաղաքական ստրկությունը: Յեթե տնտեսական բնագավառում բանվորական կլանքի վերաբերյալ չկա այնպիսի հարց, վորն ոգտագործման յենթակա չլիներ տնտեսական ազիտացիայի համար, ճիշտ այդպես ել քաղաքական բնագավառում չկա նաև այնպիսի հարց, վորը քաղաքական ազիտացիայի առաջականությունը: Ազիտացիայի այդ լիրկու տնտեսական սոցիալ-դեմոկրատների գործունելության մեջ անքակտիվությն կապված են այնպիս, ինչպես մեղալի լերկու յերեսները: Թե անտեսական և թե քաղաքական ազիտացիան պրոլետարիատի դասակարգային ինքնազիտակցության զարգացման համար հավասարապես անհրաժեշտ են, թե տնտեսական և թե քաղաքական ազիտացիան հավասարապես անհրաժեշտ են, իբրև ուսւական բանվորների գասակարգացին կովի զեկավարություն, վորովհետեւ գասակարգացին ամեն մի կորիվ քաղաքական կորիվ եւ թե մեկ, և թե մյուս

ագիտացիան արթնացնելով բանվորների գիտակցությունը, կազմակերպելով, դիսցիպլինալի լևնթարկելով նրանց, կըրթելով նրանց հասերաշխ գործունելության և հանուն սոցիալ-դեմոկրատական իդեալների պայքարի համար, բանվորներին հնարավորություն կտա փորձելու իրենց ուժերը մոտակա խնդիրներում, մոտակա՝ կարիքներում, նրանց հնարավորություն կտա իրենց թշնամուց ձեռք բերելու մասնակի զիջողություններ, բարելավելով իրենց տնտեսական դրությունը, հարկադրելով կապիտալիստներին հաշվի առնելու կազմակերպված բանվորների ուժը, հարկադրելով կառավարությանը ընդարձակելու բանվորների իրավունքները, լսելու նրանց պահանջները, մշտական լերկուղի մեջ պահելով կառավարությանը՝ թշնամարար տրամադրված բանվորական այն մասսաների հանդեպ, վորոնք դեկալարվում են սոցիալ-դեմոկրատական ամուր կազմակերպության կողմից:

Մենք մատնանշեցինք սոցիալիստական յեվ դեմոկրատական պրոպագանդի յեվ ագիտացիալի անքակտելի մոտիկությունը, հեղափոխական աշխատանքի լիակատար զուգահեռությունը թե մեկ և թե մյուս սփերալում: Սակայն գործունեյության և պայքարի այդ լերկու տեսակների մեջ կա նաև խոշոր տարբերություն: Այդ տարբերությունն այն ե, վոր տնտեսական պայքարում պլութարիատը միանդամայն միանակ և կանգնած, իրեն դեմ ունենալով և՛ հողատեր-ազնվականներին, և՛ բուրժուազիային, ոգտվելով միմիայն (և այն ել հազիվ թե վոչ միշտ) մանր բուրժուազիայի այն տարբերի ոգնությամբ, վորոնք ձգտում են դեպի պրոլետարիատը: Մինչդեռ դեմոկրատական, քաղաքական պայքարում ուսւական բանվոր դասակարգը միայնակ չե կանգնած, նրա դեմ ունենալով միայնակ չե կանգնած, նետ մեկտեղ կանգնած են քաղաքական ոպողիցիոն բոլոր տարբերը, բնակչության այն խափերն ու դասակարգերը, վորչափով նրանք թշնամի յևն աբսոլյուտիզմին և այս կամ այն ձեռք նրա դեմ պայքար են մղում: Պրոլետարիատի հետ մեկ-

տեղ կանգնած են այստեղ թե բուրժուազիայի, թե կըթված դասակարգերի, թե մանր բուրժուազիայի, թե արսոլյուտիզմի կողմից հետապնդվող ժողովուրդների, թե կրօնների և աղանդների ուղղված իշխանությունների մեջ պետք ելինի այդ տարբերի հետ (1): Յեկ-(2)-նա չպետք ել արդյոք նրանց հետ միանա արսոլյուտիզմի դեմ ընդհանուր պայքար մղելու համար: Զեր վոր սոցիալ-դեմոկրատները բոլորն ընդունում են, վոր մուսսաստանում քաղաքական հեղափոխությունը պետք ե նախորդի սոցիալիստական հեղափոխությանը. չի հետևում արդյոք, վոր արսոլյուտիզմի դեմ կովելու համար քաղաքական բոլոր ուղղված իշխանությունների հետ միանալով՝ պետք ե առայժմ մի կողմ թողնել սոցիալիզմը, արդյոք այդ պարտադիր չե արսոլյուտիզմի դեմ կոխին ուժեղացնելու համար:

Ինչ վերաբերում ե արսոլյուտիզմի դեմ կռվող բանվոր դասակարգի վերաբերմունքին, վոր նա ունի գեղի քաղաքականապես ուղղվածիցիոն հասարակական մյուս բալոր դասակարգերն ու խմբակցությունները, ապա այդ լիովին ճիշտ կերպով վորոշված ե սոցիալ-դեմոկրատիզմի հիմնական սկզբունքներով, վորոնք շարադրված են հոչակավոր պկոմունիստական մանիֆեստում\*:  
Սոցիալ-դեմոկրատները պաշտպանում են պրոլետեսիվ հասարակական դասակարգերին ընդդեմ ուեակցիոն դասակարգերի, բուրժուազիային՝ ընդդեմ արտօնյալ և դասալիին հողատիրության ներկայացուցիչների և ընդդեմ չինովազիության, խոշոր բուրժուազիային՝ ընդդեմ մանր բուրժուազիայի ուեակցիոն ձգտումների: Այդ

\* Այդ մանիֆեստը գրել են կ. Մարքսն ու ֆ. Ենգելսը 1848 թ. բանվորների միջազդային կազմակերպության՝ Կոմունիստների Միության հանձնարարությամբ, վորի մեջ առաջին անգամ արվել ե գիտական սույնական սկզբունքները: Խմբ.:

պաշտպանությունը չի լենթադրում և չի պահանջում վեհ մի կոմպոզիս վոչ-սոցիալ-դեմոկրատական ծրագրերին և սկզբունքներին, այդ—զաշնակցին պաշտպանելն ե ընդգեւ տվյալ թշնամու, ըստ վորում սոցիալ-դեմոկրատներն այդ պաշտպանությունը ցուց են տալիս, վորպիսպի արագացնեն ընդհանուր թշնամու տապալումը, սակայն նրանք այդ ժամանակավոր դաշնակիցներից իրենց համար վոչինչ չեն սպասում և նրանց վոչինչ չեն զիջում: Սոցիալ-դեմոկրատները պաշտպանում են լուրաքանչյուր հեղափոխական շարժում՝ ընդդեմ ժամանակակից հասարակակարգի, յուրաքանչյուր ճշված ժողովրդին, հալածվող կրոն, արհամարհված դասին և այն, վորոնք պայքարում են իրենց իրավահավասարության համար:

Սոցիալ-դեմոկրատների պրոպագանդացում քաղաքական պողիցին բոլոր տարրերի պահանջուրյանը նրանով կարտահայտվի, վոր ապացուցելով արսովուտիզմի թշնամությունը բանվորական գործին, սոցիալ-դեմոկրատները ցուց կտան արսովուտիզմի թշնամությունը նաև այս կամ այն հասարակական խմբակցություններին, ցուց կտան բանվոր դասակարգի համերաշխությունը այդ խմբակցություններին այս կամ այն հացերում, այս կամ այն խնդիրներում յեվ այն: Ազիտացիայում այդ պաշտպանությունը կարտահայտվի նրանով, վոր սոցիալ-դեմոկրատները պիտի ոգտվեն արտավորութիզմի վոստիկանական ճնշման լուրաքանչյուր արտահայտությամբ և ցույց տան բանվորներին, թե ինչպես այդ ճնշումն ընկնում ե բոլոր ռուսական քաղաքացիների վրա ընդհանրապես և հատկապես ճնշված դասերի, ժողովուրդների, կրոնների, աղանդների ներկայացուցիչների վրա և այն մասնավորապես և ինչպես և արտահայտում այդ ճնշումը բանվոր դասակարգի վրա առանձնապես: Վերջապես պրակտիկայում այդ պաշտպանությունն արտահայտվում ե նրանով, վոր ռուսական սոցիալ-դեմոկրատները պատրաստ են

դաշինքներ կնքելու այլ ուղղությունների հեղափոխականների հետ՝ այս կամ այն մասնավոր նպատակներին համեմու համար, և այդ պատրաստակամությունը բազմիցս ապացուցված ե գործով:

Այստեղ մենք մտենում ենք նաև լերկորդ հարցին: Մատնանշելով ոպողիցին այս կամ այն խմբակների համեմաշխությունը բանվորների հետ, սոցիալ-դեմոկրատները միշտ բանվորներ կընտրեն, կրացատրեն այդ համերաշխության ժամանակավոր և պայմանական ընույթը, միշտ կշետեն դասակարգակին առանձնացումն այն պրոլետարիատի վորը կարող ե վաղը դառնալ իբ ալսորվա զաշնակիցների հակոսակորդը: Մեզ կասեն՝ «այսպիսի մատնանշումը ներկայում կրուլացնի քաղաքական ազատության համար պատրոլ բոլոր մարտիկներին»: Այդպիսի մատնանշումը կուծեղացնի քաղաքական ազատության համար մարտիկներին, —կպատասխանենք մենք: Ոժեկ են միմիայն այն մարտիկները, վորոնք հենվում են վորոշ դասակարգերի գիտակցված իրական շահերի վրա, և լուրաքանչյուր սքողումն այդ դասակարգակին շահերի, վորոնք արդեն վըճռական դեր են խաղում ժամանակակից հասարակության մեջ, մարտիկներին միմիայն կթուլացնի: Այս 1-ին: Իսկ 2-րդ, արսովուտիզմի դեմ մղվող պատքարում բանվոր դասակարգը պետք ե իրեն առանձնացնի, վորովհետեւ նա յի միայն մինչև վերջը արսովուտիզմի հետևողական և անպահման թշնամին, կոմպրոմիսները հնարավոր չեն միմիայն նրան և արսովուտիզմի միջև, գենոկրատիզմը միմիայն բանվոր դասակարգի մեջ կարող ե առանց վերապահությունների, առանց անվճականության, առանց հետ նայելու կողմնակից գտնել: Մյուս բոլոր դասակարգերում, խմբակցություններում, բնակչության խավերում թշնամությունը զեղի արսովուտիզմը անպայման չի, նրանց գենոկրատիզմը միշտ հետ և նայում: Բուրժուազիան չի կարող չգիտակել ար-

պյունաբերական և հասարակական գարզացման կասեցումը  
արսոլուտիզմի կողմից, սակայն նա վախենում է քաղաքա-  
կան և հասարակական կարգերի լիակատար դեմոկրատացու-  
մից և միշտ ել կարող ե արսոլուտիզմի հետ դաշինք կնքել  
ընդդեմ պրոլետարիատի: Մասն բուրժուազիան իր իսկ  
բնությամբ լիրկերեսանի չե, և մի կողմից ձգտելով դեպի  
պրոլետարիատն ու դեպի դեմոկրատիզմը, մյուս կողմից նա  
ձգտում ե դեպի ռեակցիոն դասակարգերը, փորձում ե կա-  
սեցնել պատմությունը, ընդունակ և լինթարկվել արսոլու-  
տիզմի եքսպերիմենտներին և խաղերին (թեկուղ Ալեքսանդր  
Յ-բդի «Ժողովրդական քաղաքականության» ձևով), վորակա  
մանր սեփականատերերի, իր զրությունն ամրացնելու համար  
ընդունակ և դաշինք կնքել կառավարող դասակարգերի հետ  
ընդդեմ պրոլետարիատի: Կրթված մարդիկ, ընդհանրապես  
«ինտելիգենցիան», չեն կարող չղիմազրել մարդու միտ-  
քըն ու գիտելիքը թունավորող արսոլյուտիզմի վայրենի  
վոստիկանական ճնշմանը, սակայն, այդ ինտելիգենցիայի  
նյութական շահերը կապում են նրան արսոլուտիզմին,  
բուրժուազիյին, ստիպում են նրան լինել անհետեղական,  
կոյպրոմիսներ անել, իր ոպողիցիոն և հեղափոխական հուրը  
վաճառել կազյոննի ոռճիկի համար կամ շահույթներին ու  
դիվիդենդներին մասնակցություն ունենալու համար: Ինչ  
վերաբերում ե ճնշված ժողովուրդներում և հալածվող դա-  
վանաբանություններում գոյություն ունեցող դեմոկրատիկ  
տարրերին, ապա ամեն մեկը գիտի ու տեսնում ե, վոր  
դասակարգալին հակասությունները բնակչության այդ կա-  
տեգորիաների ներսում շատ ավելի խորը և ավելի ուժեղ  
են, քան նման կատեգորիայի բոլոր դասակարգերի համե-  
րաշխությունն ընդդեմ արսոլյուտիզմի և հանուն դեմոկրա-  
տական հաստատությունների: Միմիայն պրոլետարիատը  
կարող է լինել—և իր դասակարգալին դրությամբ չի կա-  
րող ըլինել—մինչև վերջը հետևողական դեմոկրատը և ար-

սոլյուտիզմի վճռական թշնամին, վորն ընդունակ չե վոչ մի  
զիջողության և կոմպլումիի: Միմիայն պրոլետարիատը  
կարող է լինել քաղաքական ազատության և դիմոկրատական  
հաստատությունների համար մարտնչող առաջալոր մարտիկը,  
1-ին, վարովհետեւ քաղաքական ճնշումն ամենից ուժեղ  
կերպով անդրադառնում ե պրոլետարիատի վրա, չգտնելով  
վոչ մի կորրեկտիվ այն դասակարգի դրության մեջ,  
վորը մուտք չունի թե՛ բարձրագույն իշխանության, թե՛  
նույնիսկ չինովնիկների մոտ և թե՛ աղեցություն չունի  
հասարակական կարծիքի վրա: Յեկ 2-րդ, միայն պրո-  
լետարիատն և ընդունակ մինչեւ վերջը հասցնել քաղա-  
քական և հասարակական կարգերի դեմոկրատացումը, վո-  
րովհետեւ այդպիսի դեմոկրատացումը այդ կարգերը կցցեր  
բանվորների ձեռքը: Այս թե ինչու բանվոր դասակարգի  
դեմոկրատական գործունեյության միաձուլումը մնացած դա-  
սակարգերի և խմբերի դեմոկրատիզմի հետ՝ կթուլացներ  
դեմոկրատական շարժման ուժը, կրուլացներ քաղաքական  
պայքարը, կրաքանչեր այն պահաս վճռական, պակաս հետևո-  
ղական և կոմպրոմիսների ավելի ընդունակի: Ընդհակառակն,  
բանվոր դասակարգի ցուցաբերվելը վորպես դեմոկրատական  
հաստատությունների համար մարտնչող առաջավոր մարտի-  
կի, կումեղացնի դեմոկրատական շարժումը, կումեղացնի քա-  
ղաքական ազատության համար մզվող պայքարը, վորովհե-  
տեւ բանվոր դասակարգը մնացած բոլոր դեմոկրատական և  
քաղաքական ոպողիցիոն տարրերին առաջ կմլի, միբերալ-  
ներին կմղի դեպի քաղաքական ոպղիկալները, ոպղիկալնե-  
րին կմղի դեպի ժամանակակից հասարակության քաղա-  
քական և սոցիալական բոլոր կարգերից անվերադարձ  
կերպով խղվելը: Մենք վերենում ասացինք, վոր Ուուսաստա-  
նում բոլոր սոցիալիստներ պետք ե զառնան սոցիալ-դեմո-  
կրացներ: Այժմ մենք կավելացնենք: Բոլոր ճշմարիտ և հետևո-  
ղական դիմոկրատները Ուուսաստանում պետք ե դառնան  
սոցիալ-դեմոկրացներ:

Մեր միտքը պարզաբանենք որինակով։ Վերցնենք չի՞նովնիկության, բուրոկրատիայի հաստատությունը, վորպես կառավարման համար մասնագիտացված և ժողովրդի հանդեպ արտոնյալ վիճակի մեջ դրված առանձին մարդկանց խավի։ Սկսած արսուլուտիստական, կիսասիրական Ռուսաստանից մինչև կուլտուրական, աղատ և քաղաքակրթված Անգլիան, մենք ամենուրեք տեսնում ենք այդ հաստատությունը, վորը կազմում ե բուրժուական հասարակության անհրաժեշտ որդանը, Ռուսաստանի հետամնացության ու նրա արսուլուտիզմին համապատասխանում ե ժողովրդի լիակատար իրավագրկուրյունը չինովնիկության հանդեպ, արտօնյալ բյուրոկրատիայի լիակատար անվերահսկողությունը, Անգլիայում ժողովրդի ուժեղ հսկողությունը ունի կառավարման վրա, սակայն այնտեղ ևս այդ վիրահսկողությունն ամենենին լիակատար չե, այնտեղ ևս բյուրոկրատիան ունի շատ արտոնություններ, հանդիսանում ե հաճախ տեր և վոչ թե ժողովրդի ծառա: Յեվ Անգլիայում մենք տեսնում ենք, վոր հասարակական ուժեղ խմբավորումները պաշտպանում են բյուրոկրատիայի արտօնյալ դրությունը, խոչընդոտ են հանդիպանում այդ հաստատության լիակատար դեմոկրատացմանը, ինչից ե այդ: Նրանից, վոր նրա լիակատար դեմոկրատացումը համապատասխանում ե միմիայն պրոլետարիատի շահերին: Բուրժուազիայի ամենաառաջավոր խավերը պաշտպանում են չինովնիկության վորոշ արտօնությունները, ըմբռուտանում են բոլոր չինովնիկների ընտրականության դեմ, ցենզի կատարելապես վերացման դեմ, ըմբռուտանում են, վոր չինովնիկներն անմիջական պատասխանատու լինեն ժողովրդի առաջ և ալլն, վորովհետեւ այդ խավերն զգում են, վոր այդպիսի վերջնական դեմոկրատացումով կողավի պրոլետարիատը բնդիմ բուրժուազիայի: Ալդպես ել Ռուսաստանում: Ամենաինքնիշխան, անպատասխանատու, կաշառակեր, վայրենի, տղետ և պորտարուծ ռուսական չինովնի-

կության դեմ են դուրս յեկել ռուսական ժողովրդի չափազնց բազմաթիվ ու ամենաբազմազան խավերը: Սակայն բացի պրոլետարիատից, այդ խավերից վոչ մեկը թուլլ չերտա, վոր չինովնիկության լիակատար դեմոկրատացում լինի, վորովհետեւ բոլոր մյուս խավերն ել (բուրժուազիան, մանր բուրժուազիան, ընդհանրապես «ինտելիգենցիան») վորոշ թեկերով կապված են չինովնիկության հետ, վորովհետեւ այդ բոլոր խավերն և ուստական չինովնիկությանը ցնողակից են: Ո՞վ չգիտե, թե ինչպես ե սուրբ Ռուսիայում ինտելեգենտուադիկալը, ինտելիգենտ-սոցիալիստը դառնում կայսերական կառավարության չինովնիկ, — չինովնիկ, վորը միմիթարժում ե նրանով, թե ինքը գրասենեկային ռուսինի սահմաններում «ոգուտ ե բերում, — չինովնիկ, վորն այդ «ոգուտով» արդարացնում ե իր քաղաքական անտարբերությունը, իր լակելույունը հանդեպ մտրակի ու խարազանի կառավարության: Անպայման: միմիայն պրոլետարիատն ե թշնամի արսուլուտիմին և ռուսական չինովնիկությանը, միմիայն պրոլետարիատը չունի վոչ մի բնլ, վոր կապեր նրան աղնվական-բուրժուալիզան հւասարակության այդ որդանների հետ, միմիայն պրոլետարիատն ե ընդունակ անհաշտ թշնամության և նրանց դեմ անհաշտ պայքար մղելու:

Ապացուցելով, վոր ի դասակարգակային պայքարում սոցիալ-դեմոկրատիայի կողմից զեկավարվող սլորետարիատը հանդիսանում է ռուսական դեմոկրատիայի առաջավոր մաշտիկը, մենք ալստեղ հանդիպում ենք չափազանց տարածված և չափազանց տարրորինակ այն կարծիքին, թե իբր ռուսական սոցիալ-դեմոկրատիան քաղաքական հարցերը և քաղաքական ըլայքարը մի կողմ ե զցում: Ինչպես տեսնում ենք, այդ կարծիքը տրամադրութեն հակառակ և ճշմարտությանը իսկ ինչո՞վ բացատրել շատ անգամ բացատրված և արդին առաջին ռուսական սոցիալ-դեմոկրատական հրատա-

բակություններում—«Աշխատանքի ազատագրման» \* Խըմ-բակի արտասահմանաւ ըրոցությներում և զրգերում շարադրված՝ սոցիալ-դեմոկրատիալի սկզբունքներն այդպես զարմանալիորեն չհասկանալը։ Մեզ թվում ե, վոր այդ զարմանալի փաստը պետք եքացատրել հետևյալ էերեք հանգամանքներով։

Նախ՝ նրանով, վոր հին հեղափոխական թեորիաների ներկայացուցիչներն ընդհանրապես չեն հասկանում սոցիալ-դեմոկրատիզմի սկզբունքները, այն ներկայացդրուցիչները, վորոնք ընտելացած են գործունեյության ծրագրեր և պլաններ կազմել վերացական դաշտավառների հիման վրա և վոչ թե յերկրույթ գործող իրական դասակարգերը հաշվի առնելու հիման վրա, վորոնք պատմության կողմից վորեն փոխհարաբերության մեջ են դրված։ Հենց այն ժամանակի մեջ են կազմակերպության առաջնային դաշտավառները, վորոնք պաշտպանում են ոռուսական դեմոկրատիալին, կարող եք միայն այն կարծիքն առաջ բերել իբր թե ոռուսական սոցիալ-դեմոկրատիան ստվերի տակ և առնում ոռուսական հեղափոխականների խնդիրները։

Յերկրորդ՝ նրանով, վոր չեն հասկանում, թե տնտեսական և քաղաքական խնդիրների, սոցիալիստական և դեմոկրատական գործունեյության միացումը մեկ ամբողջության մեջ, պրոլետարիատի միասնական դասակարգային կրովի մեջ, վոչ թե թուլացնում, այլ ուժեղացնում ե դեմոկրատիկ շարժումը և քաղաքական պայքարը, այն մոլորդներով ժողովրդական մասսաների իրական շահերին, դուրս քաշելով քա-

\* «Աշխատանքի ազատագրման» Խմբակը ոռուսական սոցիալ-դեմոկրատական առաջին կամակերպությունն ե, վոր հանդիսանում ե ոռուսական սոցիալ-դեմոկրատիալի հիմնական կազմակերպությունը։ Հենմված ե 1883 թ. Պետականովի, Ակսելբորդի, Զասուլիչի և մյուսների կողմից, վորոնք վտարանդի երես արտասահմանում։ ՈՒԴԻԲԿ Ահամագումարում (1903 թ. ոգոստոս) Խըմբակը հայտարարեց, վոր գագարեցնում ե իր գոյությունը։ Խմբա-

ղաքական հարցերը «ինտելիգենցիայի նկատմամբ կարինեաներից» գեղակի փողոց, բանվար և աշխատավոր գասակարգերի միջավայրը, փոխարինելով քաղաքական ճնշման վերացական գաղափարները նրա այն ուսալ արտահայտություններով, վորոնցից պմենից շատ տառապում ե պլուտօտարիալիստը և վորոնց հողի վրա սոցիալ-դեմոկրատիան մզում ե իր տգիտացիան։ Ռուսական ռազիկալին հաճախ թվում ե, վոր սոցիալ-դեմոկրատը փոխանակ առաջավոր բանվորներին ուղղակի և անմիջապես քաղաքական պայքարի կոչելու, դրա փոխարեն մատնանշում ե բանվորական շարժման զարգացման, պրոլետարիատի զասակարգային կրվի կազմակերպման խնդիրը—վոր այդպիսով սոցիալ-դեմոկրատը նահանջում ե իր դեմոկրատիզմից, հետ ե մզում քաղաքական պայքարը։ Սակայն յեթե ալսաեղ նահանջ ել կա, ապա միայն այնպիսին ե, վորի մասին փրանսական առածն առում ե։ «il faut reculer pour mieux sauter!» (պետք ե նահանջել, վորպեսզի կարելի լինի ավելի ուժի թոշել)։

Յերրորդ, թյուրիմացությունն առաջ ե յեկել նրանից, վոր հենց «քաղաքական պայքար» հասկացողությունը նարողավոլյականի ու նարողավորավականի համար ունի զանազան նշանակություն՝ մեկ կողմից, և սոցիալ-դեմոկրատի համար՝ մյուս կողմից։ Սոցիալ-դեմոկրատներն այլ կերպ են հասկանում քաղաքական պայքարը, նրանք այն ավելի լայն են հասկանում, քան հին հեղափոխական թեորիաների ներկայացուցիչները։ Մեզ պարզ պատկերացում ե տալիս այդ դրությանը, վորը կարող ե պարագորս թվար, „Լետуչի լիստոկ группы „Народной воли““-ի 1895 թ. գետեմբերի 21 (9-ի) № 4-ը։ Ամբողջ հողով վողջունելով այդ հրատարակությունը, վորը վկայում ե մտքի խորը և բեղմնավոր այն աշխատանքի մասին, վոր կատարվում ե ժամանակակից նարողավոլյականների միջավայրում, չենք կարող չնշել Պ. Լ. Լավրովի „Օ программных вопросах“ հոդվածը (եջ 19-)

22), վորը ցայտուն կերպով ցույց է տալիս, վոր հին իմաստի նարողավոլլականներն այլ կերպ են հասկանում քաղաքական պալքարը\*: «...Այստեղ՝ զրում ե Պ. Լ. Լավրովը, խոսելով նարողավոլլական և սոցիալ-դեմոկրատական ծրագրերի առնչության մասին,— ելական ե միմիայն մի բան, հնարավմբ ե արդյոք արսոլյուտիզմի ժամանակ ուժեղ բանվորական կուսակցություն կազմակերպել առանց արսոլյուտիզմի դեմ ուղղված հեղափոխական կուսակցություն կազմակերպելու» (եջ 21, սյունյակ 2). հենց նույնը մի քիչ վերևում (սյունյակ 1) «... արսոլյուտիզմի տիրապետության ժամանակ կաղմակերպել ուստական բանվորական կուսակցություն, միաժամանակ այդ արսոլյուտիզմի դեմ չկազմակերպելով հեղափոխական կուսակցություն»: Մեղ միանգամայն անհասկանալի ին Պ. Լ. Լավրովի համար այդքան կարդինալ եական այդ զանազանությունները, ի՞նչ և նշանակում: «Բանվորական կուսակցություն առանց արսոլյուտիզմի դեմ ուղղված հեղափոխական կուսակցության»: Միթե հենց ինքը բանվորական կուսակցությունը հեղափոխական կուսակցություն չե: Միթե նա չի ուղղված արսոլյուտիզմի դեմ, Այդ տարրինակություն բացատրությունը տալիս ե Պ. Լ. Լավրովի հոգվածի հետեւյալ կտորը. «Ռուսական բանվորական կուսակցության կազմակերպություն հարկ ե լինում ստեղծել արսոլյուտիզմի գոյության պայմաններում՝ նրա բոլոր

\* № 4-ում Պ. Լ. Լավրովի տպկած հոդվածը միմիայն մի «քաղվածք» ե Պ. Լ. Լավրովի „Մատերիալы“-ի համար նախանշանակված ընդարձակ նամակից: Մենք լսել ենք, վոր այս ամսու (1897 թ.) արտասահմանում լույս ե տեսել Պ. Լ. Լավրովի նաև այդ նամակն ընդարձակ ձեռվ և Պիեսանովի պատասխանը, սակայն մենք չկարողացանք տեսնել թե մեկը, թե մյուսը: Ճիշտ այդպես ել մեզ անհայտ ե, թե լույս տեսել ե արդյոք Պետցին լիստությունը խոստացել ե Պ. Լ. Լավրովի նամակի առթիվ մի բանվորական կրաքարելու մասին: Տես № 4, եջ 22, սյունյակ 1, ժամանթագրություն:

գրավչություններով հանդերձ: Յեթե սոցիալ-դեմոկրատներին հաջողվեր այդ բանն անել, միաժամանակ չկազմակերպելով քաղաքական դավադրություն\* արսոլյուտիզմի դեմ՝ նման դավադրության բոլոր պայմաններով հանդերձ, ինարկե, նրանց քաղաքական ծրագիրը պատշաճ ծրագիր էլիներ ուռասմական սոցիալիստաների համար, քանի վոր բանվորների աղատագրում իրենց, բանվորների ուժերով տեղի կունենար: Սակայն յեթե այդ անհնարին չե, խիստ կասկածելի լիս (եջ 21, սյունյակ 1): Ահա զործի եկությունը: Նարողավոլյականի համար քաղաքական պայքարի հասկացողությունը համազոր ե քաղաքական դավադրության հասկացողության: Պետք ե խոստպահել, վոր այդ բառերով Պ. Լ. Լավրովին հաջողվեց իրապես լիակատար պարզությամբ ցույց տալ քաղաքական պայքարի տակտիկայում նարողավոլյականների և սոցիալ-դեմոկրատների հիմնական տարրերությունը: Բլանկիզմի \*\*, զավադրականության տրադիցիաները նարողավոլյականների մոտ խիստ ուժեղ են, այնչափ ուժեղ, վոր նրանք քաղաքական պայքարը չեն կարող այլ կերպ պատկերացնել իրենց, քան քաղաքական դավադրության ձևով: Խոկ սոցիալ-դեմոկրատներն այդպիսի ներ հայացքներից զերծ են. նրանք դավադրություններին չեն հավատում. կարծում են, վոր դավադրությունների ժամանակը վաղուց ե անցել, վոր քաղաքական պայքարը դավադրության հանգեցնել, կնշանակի այն անչափ սահմանափակել՝ մի կողմից, իսկ մրուկողմից՝ ընտրել պայքարի ամենաանհաջող լիդանականի:

\* Ըստգծումը մերն են

\*\* Բլանկիզմը քրանսական հեղափոխական Ոգյուտա Բլանկի (1805—1888) անունով եւ Լենինը «Քրանկիզմը» բնութագրում ե վորպես մի թեորիա, վոր ժիառում ե գասակարգային կափվությամբ մարդկության փրկությունը վարձու ստրկությունից վոչ թե գասակարգային կափի միջոցով ե սպասում, այլ փոքրաթիվ ինտելիգենտական փոքրամասնության գավագրության մէջոցով: Խոր:

Բոլորն ել հասկանում են, վոր Պ. Լ. կավրովի այն խոսքերը, իբր թե՝ «Արևմուտաքի գործունեցությունը ոռուսական սոցիալ-դեմոկրատների համար անպայման որինակ և ծառայում» (Եջ 21, սյունյակ 1), ունեն վոչ ավելի, քան բանավեճի բնույթ, և վոր իբրոք յերբեք ոռուսական սոցիալ-դեմոկրատները չեն մոռացել մեր քաղաքական պայմանների մասին, յերբեք չեն յերազել Ռուսաստանում բացարձակ կերպով բանվորական կուսակցություն ստեղծելու հնարավորության մասին, սոցիալիզմի համար մղվող կովի խնդիրը յերբեք չեն գատել քաղաքական կովի խնդրից: Սակայն նրանք միշտ կարծել են և շարունակում են կարծել, վոր այդ կոփվը պետք ե մղեն վոչ թե դավագիրները, այլ բանվորական շարժման վրա հենված հեղափոխական կուսակցությունը: Նրանք կարծում են, վոր արսոլյուտափակի գեմ կովել՝ նշանակում ե վոչ թե դավագրություններ կազմակերպել, այլ պրոլետարիատին կրթել, դիսցիպլինայի լենթարկել և կազմակերպել, բանվորների մեջ ազիտացիա մղել, մի ազիտացիա, վորը խարանում և արսոլյուտափակի ամեն մի երեսույթ, անարգանքի սյունին և զամում վոստիկանական կառավարության բոլոր ասպետներին և ստիպում և այդ կառավարությանը զիջողություններ անելու: Միթե հենց արդպիսի գործունեցուն չունի Ս. ~ Պետերբուրգի «Բանվոր դասակարգի ազատագրման պայքարի միությունը»: Միթե այդ կազմակերպությունը իրենից չի ներկայացնում և հենց սազմակիցություն այնպիսի մի կուսակցության, վորը հենցում ե բանվորական շարժման վրա, զեկավարում ե պրոլետարիատի գասակարգավին կոփվը, կապիտալի և արսոլյուտ կառավարության գեմ մղվող կոփվը, առանց վորեն զավադրություն կազմակերպելու, և իր ուժերը կազմելով ուղղակի սոցիալիստական և գեմոկրատական կովի միացումից, զարձնելով պետերբուրգյան պրոլետարիատի զասակարգային անքաժան մի կոփվ: Միթե «Միության» դրածունելությունն

արդեն չապացուցեց, չնայած իր այդքան կարճ լինելուն, վոր սոցիալ-գեմոկրատիայի կողմից զեկավարվող պրոլետա րիատն այնպիսի մի խոշոր ուժ և, վորի հետ արդեն ստիպված և հաշվի նստել կառավարությունը և վարին նա շատպում և զիջումներ անել: 1897 թ. հունիսի 14-ի (2-ի) որենքը թե իր շուտափույթ գործադրությամբ և թե իր բովանդակությամբ \* ակներեւ ցույց ետալիս իր նշանակությունը, վորպես հարկադրված մի զիջողություն պլոյետարիատին, վորպես ուսւական ժողովրդի թշնամուց խլված մի դիրք: Այդ զիջողությունը չափազանց փոքր և, դիրքը շատ անհզան, սակայն չե վոր բանվորական շարժման հենց այդ կազմակերպությունը, վորին հաջողվեց հարկադրանքով ձեռք բերել այդ զիջողությունը, նույնպես չի տարբերվում վահ իր ծավալով, վահ իր ամրությամբ, վահ իր վաղեմիությամբ, վահ իր փորձի կամ թե միջոցների հարատությամբ, «Պայքարի միությունը», ինչպես հայտնի է, հիմնվել է միմիայն 1895—1896 թ., և դեպի բանվորներն ունեցած նրա կոչերը սահմանափակվում ելին միմիայն հեկտո- գրաֆիկ կամ լիտոգրաֆիկ թերթիկներով: Հնարավոր և արդյոք ժխտել վոր նման մի կազմակերպություն, վորը միացնում ե բանվորական շարժման առնվազն խոշորագույն կենտրոնները Ռուսաստանում (Ա.-Պետերբուրգի, Մասկվա-Վլադիմիրի գավառները, հարավային և կարևորագույն քաղաքները, ինչպիսին ե Աղեսան, Կիեվը, Սարատովը և այլն), վորն ունի հեղափոխական որգան և ոգտվում ե ոռուսական բանվորների մեջ նույնպիսի հեղինակությամբ, ինչպիսի հեղինակությամբ ուղարկում ե «Պայքարի միությունը» Պետերբուրգի բանվորների մեջ,— վոր նման մի կազմակերպու-

\* Պետք է բուրգայան տեքստի կործարաններում 1895—1897 թ. թ. բանկված խոշոր գործադրութերի հստեսանքով հրատարակված այդ որենքով կը ճամապում եմ այլատանքային որը: Խմբա:

թյուն ժամանակակից Ռուսաստանում կլիներ խոշորագույն մի ֆակտոր.— Փակտոր, վորի հետ կառավարությունը չեր կարող հաշվի չնստել իր թե արտաքին և թե ներքին ամբողջ քաղաքականության մեջ: Ղեկավարելով պրոլետարիատի դասակարգային կոփը, զարգացնելով կազմակերպությունն ու դիսցիպլինան բանվորների մեջ, ոգնելով նրանց՝ կոփի մղելու իրենց մոտակա տնտեսական խնդիրների համար և մեկը մյուսի հետեւ դիրքեր խլելու կապիտալից, քաղաքականապես դաստիարակելով բանվորներին և սիստեմատիկ ու անշեղ կերպով հետապնդելով արսոլյուտափմին, վոչնչացնելով ցարական յուրաքանչյուր բաշիրուղուկին, վորը պրոլետարիատին զգալ և տալիս վոստիկանական կառավարության ծանր թաթը,— նման կազմակերպությունը միաժամանակ կլիներ մեր պայմաններին հարմարեցրած բանվորական կուսակցության կազմակերպություն և արսոլյուտափմի դեմ ուղղված հզոր հեղափոխական կուսակցությունն էսկ առաջուց դատել այն մասին, թե այդ կազմակերպությունն ինչ միջոցի յի դիմիլու արսոլյուտափմին վճռական հարված հասցնելու համար, կզերագասի՞ն առ արդյոք, որինակ, ապստամբությունը կամ մասսայական քաղաքական գործադուլը կամ գրոհի մի այլ յեղանակ,— այդ մասին առաջուց դատել և ներկայում այդ հարցը լուծել՝ կլիներ մի դատարկ գոկտրինյորություն: Այդ նման կլիներ այն բանին, վոր գեներալները ուղամական խորհուրդ անելին նախքան զորք հավաքելը, նրան մոքիլի զացիալի յենթարկելը և թշնամու դեմ ռազմերթի դուրս բերելը: Էսկ յերբ պրոլետարիատի բանակն անշեղ կերպով և ամուլ սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ղեկավարությամբ կոփի կմղի իր անտեսական և քաղաքական ազատագրության համար,— այդ ժամանակ այդ բանակը ինքը ցույց կտա գեներալներին գործողության յեղանակներ և միջոցներ: Այդ ժամանակ, և միմիայն այդ ժամանակ կարելի լի լուծել արսոլյուտափմին վերջնական հարված հասց-

նելու հարցը, վորովհետև հարցի լուծումը կախված ե բանվորական շարժման վիճակից, նրա ծավալից, շարժման կողմից մշակված կովի իեղանակներից, շարժումը ղեկավարող հեղափոխական կազմակերպության հատկություններից, այն վերաբերմունքից, վոր կունենան դեպի պրոլետարիատն ու արսոլյուտափմը այլ հասարակական տարրերը, արտաքին ու ներքին քաղաքականության պայմաններից,— մի խոսքով, հաղարավոր պայմաններից, վորոնք առաջուց գուշակել և անհնարին ե, և անողուտ:

Ուստի վերին աստիճանի անիրավացի յե նաև Պ. Լ. Լավրովի հետեւյալ գատողությունը, թե՝

«Իսկ յեթե նրանք (սոցիալ-դեմոկրատները) հարկադրված լինեն, այսպես թե այնպես, խմբել վոչ միայն բանվորական ուժերը՝ կապիտալի գեմ կոփի մղելու համար, այլև համամարել հեղորդություններին և խմբակներին՝ արսոլյուտափմի դեմ կովելու համար, ապա սուսական սոցիալ-դեմոկրատները փաստորեն (ընդդժումը հեղինակինն ե) կընդունեն իրենց հակառակորդների, նարոգավոլյականների ծրագիրը լինչպես ել վոր իրենց անվանելիս լինեն: Ուստաստանում համայնքի, կապիտալի գմի բախտի, անտեսական մատերիալի կմի նկատմամբ հայացքների զանազանությունը մանրամասնություններ են, վոր իսկական գործի համար չափազանց քիչ կարևորություն ունեն և նպաստում կամ խանգարում են մասնավոր ինքիլների, հիմնական կետերի պատրաստման մասնավոր յեղանակների, և վոչ ավելին» (եջ 21. սյունյակ 1):

Տարօրինակ ե նույնիսկ վիճարկել այդ վերջին դրույթը, վոր իրը թե սուսական կանքի և սուսական հասարակության զարգացման հիմնական հարցերի և պատմության ըմբռնման հիմնական հարցերի նկատմամբ հայացքների զանազանությունը կարող ե վերաբերել միմիայն և մանրամասնությունների: Արդեն վաղուց ե ասված, վոր առանց հեղափոխական թերիայի չի կարող լինել նաև հեղափոխական շարժում, և ներկայումս հաղիվ թե կարիք լինի այդպիսի ճշմարտությունն ապացուցել: Դասակարգային կովի թերիան, սուսական պատմության մատերիալիստական ըմբռնող ու-

Թլունը և Ռուսաստանի ժամանակակից տնտեսական ու քաղաքական զրության մատերիալիստական գնաճատականը՝ հեղափոխական կոփվը վորոշ դասակարգի վորոշ շահերին հանգեցնելու անհրաժեշտության ճանաչումը, վերլուծության յենթարկելով՝ այդ դասակարգի վերաբերմունքը գեղի առ դասակարգերը—այս խոշորագույն հեղափոխական հարցերը սմանրամասնություններ» անվանելը—այն աստիճան հսկայական սիալ և անսպասելի ըան և հեղափոխական թերթիալի մի վետերանի կողմից, վոր մենք համարյա պատրաստ ենք այդ տեղը ուղղակի լարսու\* համարել: Իսկ ինչ վերաբերում ե առաջին կեսին քաղված տիրագի, նրա անարդարացի լինելն ել ավելի ապշեցուցիչ ե: Տպագրված ձեռվ հայտարարել, թե ոռուսական սոցիալ-դեմոկրատները բանվորական ուժերը միմիայն խմբավորում են կապիտալի դեմ կոիվ մղելու (այսինքն՝ միմիայն տնտեսական պայքար մղելու) համար, չհամախմբելով հեղափոխական անձնավորություններին և խմբակներին արսովուտիզմի դեմ կովելու — այդ նշանակում և կամ չիմանալ, կամ չուզել իմանալ ոռուսական սոցիալ-դեմոկրատների գործունեյության մասին յեղած հանրածնոթ փաստերը: Կամ զուցե Պ. Լ. Լավրովը Ռուսաստանում գործնականապես աշխատող սոցիալ-դեմոկրատներին չի համարում «հեղափոխական անձնավորություններ» և «հեղափոխական խմբակներ»: Կամ (թերեւս այս ավելի ճիշտ ե) արսովուտիզմի դեմ «կոիվ մղելու» տակ նա հասկանում ե միմիայն դավագրություն կազմել արսովուտիզմի դեմ (Համեմատիք եջ 21. սյունյակ 2. «...զործը վերաբերում է հեղափոխական դավադրություն կազմակերպելուն»): Ընդգծումը մերն ե): Գուցե ըստ Պ. Լ. Լավրովի կարծիքի, ով քաղաքական դավագրություններ չի սարգում, նա քաղաքական պայքար ել չի մղում: Ելի լենք կրկնում, այդ հայցը

միանգամայն համալրատասխանում ե հին նարոդավոյցականության տրադիցիաներին, և նա բոլորովին չի համապատասխանում վոհ քաղաքական պատերազմի վերաբերյալ ժամանակակից հասկացողությանը, վոհ ել ժամանակակից իրականությանը:

Մեզ մնում ե միքանի խոռք ել ասել նարոդավայրավական-ների մասին: Մեր կարծիքով, Պ. Լ. Լավրովը լիովին իրավացի լի՛ ասելով, վոր սոցիալ-դեմոկրատները «հանձնարարում են նարոդավայրավականներին, վորպես ավելի անկեղծ-ների, և պատրաստ են նրանց պաշտպանել, իմիջի ալլոց, առանց նրանց հետ ձուլվելու» (եջ 19, սյունյակ 2). Հարկավոր եր միայն դրան ավելացնել՝ վորպես ավելի անկեղծդիմոկրատների և վարչակի վոր նարոդավրավականները հանգես են գալիս վորպես հետեղական գեմոկրատներ: Դժբախտաբար, այդ պայմանը ավելի շուտ մի ցանկալի ապագա յե, քան իսկական ներկա: Նարոդավրավականները ցանկությունից հայտնեցին գեմոկրատական խնդիրները նարոդնիկությունից և առնասարակ «ոռուսական սոցիալիզմի» հին ձևերի հետ ունեցած կապից ակատեր, սակայն նրանք ընալ յերբեք հին նախապաշտպաններեց չափատիցին և բնավ հետեղական չեղան, լերը իրենց կուսակցությունը անվանեցին բացառապես քաղաքական բարեփոխությունների սոցիալական (???)՝ հեղափոխական կուսակցություն [տես նրանց «Մանկականը», թվագրված 1894 թ. մարտի 3-ին (փետրվարի 19-ին)] և իրենց «Մանկականում» հայտնեցին, վոր «ժողովրդական իրավունքի հասկացողության մեջ մտնում և զովրդական արտադրության կազմակերպումը» (մենք հարկադրված ենք ցիտատներ իւրեւ հիշողությամբ), այդպիսով կազմական դավագրություն կազմակերպումը (մենք հարկադրված ենք ցիտատներ իւրեւ հիշողությամբ), այդպիսով մեղմացնելով նարոդնիկության միևնույն նախապաշտպանման մեջ մերը Այդ պատճառով, թերեւս, Պ. Լ. Լավրովը այնքան ել անիրավացի չե յեղել՝ անվանելով նրանց «մասկարադացին քաղաքագետներ» (եջ 20, սյունյակ 2): Սակայն թերեւս ավե-

\*—սխալանք: Խմբա-

Մե արդարացի լինի նաբողապահավականության վրա նայել վորպես անցողիկ մի ուսմունքի վրա, վորին չի կարելի չվերագրել այն ծառայությունը, վոր նա աճաշում եր ինքնազդ նարողնիկական դոկտրիններից և բացարձակ կերպով բանավեճի մեջ եր մտնում նարողնիկության այն ամենազագրիլի ռեակցիոններների հետ, վորոնք վոստիկանական դասակարգական աբսոլյուտիզմի առաջ թուլեն տալիս իրենց խոսելու անտեսական և վոչ թե քաղաքական բարեփոխությունների ցանկալիության մասին (տես «Ժողովրդական իրավունքի» հրատարակության „Հասցինայ Յօպրօս“-ը), Յեթե նարողապահավականների կուսակցության մեջ իրոք վոչ վոք չկա, բացի նախկին սոցիալիստներից, վորոնք իրենց սոցիալիստական զրոշը թագցնում են տակտիկական դիտավորություններով և միմիրայն վոչ-սոցիալիստ քաղաքացիների դիմակ են հագնում (ինչպես յենթագրում ե Պ. Լ. Լավրովը, եջ 20, սյունակ 2), — այդ դեպքում, ինարկե, այդ կուսակցությունը վոչ մի ապագա չունի. Սակայն յեթե այդ կուսակցության մեջ կան և վոչ մասկարադային, այլ իսկական վոչ-սոցիալիստ քաղաքագետներ, վոչ-սոցիալիստ դեմոկրատներ, — այդ դեպքում այդ կուսակցությունը կարող ե վոչ պակաս ոգուտ տալ, աշխատելով մոտենալ մեր բուրժուազիականապես ոպողիցիոն տարերին, աշխատելով արթնացնել մեր մանր բուրժուազիայի, մանր առետրականների, մանր արհեստավորների դասակարգի քաղաքական ինքնագիտակցությունը և այլն, — այն դասակարգի, վորն Արևմտյան Յեկարպայում ամեն տեղ գեմոկրատական շարժման մեջ իր դերն ե խաղացել վորը մեզ մոտ Ռուսաստանում հետոնեփորմյան դարաշրջանում կուլտուրական և այլ տեսակետից առանձնապես արագ հաջողություններ ե ձեռք բերել և վորը չի կարող չզգալ վոստիկանական կառավարության ճնշումը և խոշոր, գործարանատերերին, ֆինանսական և արդյունաբերական տուղ-մոնոպոլիստներին

ցույց տրված նրա ցինիկ ոժանդակությունը: Դրա համար անհրաժեշտ ե միայն, վոր նաբողապահավականներն իրենց առաջ խնդիր գնեն ուղղակի բնակչության զանազան խավերին մոտենալ և վոչ թե միշտ սահմանափակվեյին նույն այդ «ինտելիգենցիայով», վորի անզորությունը՝ մասսաների իրական շահերից կտրված լինելու հետևանքով՝ ընդունում ե նաև „Հասցինայ Յօպրօս“-ը: Դրա համար անհրաժեշտ ե, վոր նարողապահավականները վերջ տան հասարակական բազմազան տարրերին միաձուլելու և սոցիալիզմը քաղաքական խնդիրների հանդեպ հետ ցցելու ամեն մի պրետենդիտային, վոր նրանք վերջ տան այն կեղծ ամոթին, վորն արգելք ե հանդիսանում ժողովրդի բուրժուալիստ քաղաքական համաձայն, արթնացնելով և զարգացնելով այն հասարակական խմբակցությունների և դասակարգերի դասակարգային ինքնագիտակցությունը, վորոնց համար սոցիալիզմը բոլորվին հարկավոր չե, սակայն վորոնք քանի գնում, այնքան ավելի ուժեղ են զգում աբսոլյուտիզմի ճնշումը և քաղաքական ազատության անհրաժեշտությունը:

---

Ուստան սոցիալ-դեմոկրատիան դեռևս շատ յերիտասարդ ե: Նա նոր-նոր ե զուրս գալիս այն սաղմնային վիճակից, յերբ գերիշող տեղ եյին գրավում թեորիական հարցերը: Նա իր պրակտիկ գործունեյությունը նոր-նոր ե սկսում ծավալել: Սոցիալ-դեմոկրատական թեորիաների և ծրագրերի քննադատության փոխարեն այլ ֆրակցիաների հեղափոխականները պետք ե անհրաժեշտորեն դուրս գան քննադատելու ռուսական սոցիալ-դեմոկրատների պրակտիկգործունեյությունը: Յեկարտը ե խոստովանել, վոր այս վերջին քննադատությունը ամենից խիստ կերպով տարբերվում է թեորիական

Քննադատությունից, այնչափ և տարբերվում, վոր հնարավոր և յեղել մի այնպիսի ծաղրաշարժ լուր տարածել թե իր Ս.-Պետերբուրգի «Պայքարի միությունը» սոցիալ-դեմոկրատական կազմակերպություն չեւ ինքնին նման լուրի հնարավորությունն արդեն ցույց ե տալիս, վոր քաղաքական պայքարն անտես տունելու վերաբերյալ սացիալ-դեմոկրատների մասին շրջող լուրերը ճիշտ չեն. Հենց այդպիսի լուրի հնարավորությունն արդեն վկայում է, վոր շատ հեղափառականներ, վորոնց չկարողացավ սոցիալ-դեմոկրատների թեորիան համոզել, սկսում են համոզվել նրանց պրակտիկանու:

Մուսական սոցիալ-դեմոկրատիայի առաջ նոր սկսված և ել ավելի հակաբական աշխատանքի դաշտ և բացվել Մուսական բանվոր դասակարգի զարթոնքը դեպի գիտությունը, դեպի միավորումը, դեպի սոցիալիզմը, իր շահագործողների և ճնշողների դեմ կավելու նրա տարբերային ձգտումն որեցոր ավելի պայծառ և լայն կերպարանք և ստանում. Այն հսկայական հաջողությունները, վոր վերջերս ունի ոռուսական կապիտալիզմը, յերաշխալվորում ե, վոր բանվորական շարժումն իր լայնությամբ և խորությամբ անդադար աճելու յի. Ներկայումս մենք, ըստ յերեսութին, ապրում ենք կապիտալիստական ցիկլի այն ժամանակաշրջանը, յերբ արդյունաբերությունը «ծաղկում ե», աշխույժ առեսուր և տեղի ունենում, գործարաններն ամբողջ ուժով աշխատում են, և անձնեկից հետո դուրս թափվող սնկի պես յերեան են դալիս անթիվ նորանոր գործարաններ, նոր ձեռնարկություններ, բաժնետիրական ընկերություններ, յերկաթուղային կառուցվածքներ և այն և այն հարկավոր չե մարդարենել՝ նախագուշակելու համար այն անխուսափելումը (քրա) (ավելի կամ պակաս սաստիկ), վորը հաջորդելու յի արդյունաբերության այդ «ծաղկմանը». Այդպիսի փլուզումն ավելու լի մասը տնտեսամերերի մասսա-

ներին, բանվորական մասսաներին գործազուրկների շարքն ե ցցելու, այդպիսով, բանվորական բոլոր մասսաների առաջ մուր կերպով դնելու լի սոցիալիզմի և գեմոկրատիզմի այն բոլոր հարցերը, վորոնք վազուց արդեն կանգնած են յեղել յուրաքանչյուր գիտակից, յուրաքանչյուր լլջմիտ բանվորի առաջ: Մուսական սոցիալ-դեմոկրատները պետք ե մտահոգված լինեն նրանով, վոր ոռուսական պրոլետարիատն այդ փլուզումին հանդիպի ավելի զիտակից, ավելի միացած ձեռվ, հասկանա ոռուսական բանվոր դասակարգի խնդիրները, ընդունակ լինի հականարված տալու այն կապիտալիստաների գասակարգին, —վորոնք ներկայումս հսկայական ոգուտներ են քաղում և աշխատում են շարունակ վնասները բանվորների վրա գցել-ընդունակ լինի ոռուսական դեմոկրատիայի գըլ-խավորությամբ վճռական կուիզ մղելու այն վոստիկանական աբսոլուտիզմի դեմ, վորը ոռուսական բանվորների և ամբողջ ոռուսական ժողովրդի ձեռք ու վոտքը կաշկանդում ե:

Այսպիս, ուրեմն, ընկերներ, դեպի աշխատանք: Թանգարգին ժամանակն իդուր չկորցնենք: Մուսական սոցիալ-դեմոկրատիան հսկայական գործ ունի կատարելու արթնացող պրոլետարիատի պահանջները բավարարելու, բանվորական շարժումը կազմակերպելու, հեղափոխական խմբակներն ու նրանց փոխագարձ կազն ամրապնդելու, բանվորներին պրոպագանիստական և ազիտացիոն վրականություն հայթայ-թելու, Մուսաստանի բոլոր ծայրերում ցրիվ յիկած բանվորական խմբակներին և սոցիալ-դեմոկրատական խմբերին միասնական սցիփալ-դեմոկրատական բանվորական կուսակցության մեջ համախմբելու համար:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԵԱՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ ՅԵՎ ՈՈՅԻԱԼԻՍՏՆԵՐԻՆ  
«ՊԱՅՔԱՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ» ԿՈՒՆԻՑ

Մանր ժամանակ են ապրում պետքը բռուզյան հեղափոխականները։ Կառավարությունն ասես թի հավաքել ե իր բոլոր ուժերը նորերս ծնունդ առած և այնպիսի ուժով իրենց ցուց տված բանվորական շարժումը ճնշելու համար։ Զերպակալություններն անսովոր չափեր են ընդունել, բանտերը լեիթեցուն են։ Բոնում են ինտելիգենտներին, տղամարդկանց և կանանց, բոնում և մասսաներով աքսորում են բանվորներին։ Համարյա թե ամեն որ տեղեկություններ են ստացվում վոստիկանական կառավարության նորանոր զաների հասին, վորը կատաղությամբ հարձակվում ե իր թշնամինեափ վրա։ Կառավարությունը նպատակ է դրել ոռուսական նեղափակական շարժման նոր հոսանքին թույլ չտալ ամրաւալու և վոտքի կանգնելու։ Դաստիարակները և ժամանակական պարծենում են արգեն, վոր իրենց հաջողվել ե ջարդ և փշուր անել «Պաքքարի միությունը»։

Այդ պարձենկոտությունը կեղծիք և, ջնայած բոլոր հա-  
լածանքներին՝ «Պալքարի միություն» անվնաս և կիակա-  
տար գոհունակութիւմը հաստատում ենք, վոր մասուական  
ձերբակալություններն իրենց ծառալությունն են կատարում,  
հանդիսանալով ազիտացիալի հզոր զենք բանվորների և ին-  
տելիգենտ սոցիալիստների մէջ, վոր ընկած հեղափոխական-  
ների փոխարեն բարձրանում են նոր հեղափոխականներ,  
վորոնք պատրաստ են թարմ ուժերով կանգնել հանուն ոռու-  
սական պրոլետարիատի և սոմբող ոռուսական ժողովրդի պայ-  
քարող մարտիկների շարքը: Զի կարող լինել պայքար ա-  
ռանց զոհերի, և ցարական բաշիրուզուկների գաղանային  
հալածանքին անվրդով պատասխանում ենք՝ հեղափոխական-  
ներն ընկան — կեցցե՛ հեղափոխությունը:

Հալածանքների ուժեղացումը մինչև հիմա ի վիճակի լեռ

առաջ բերել «Պայքարի միության» առանձին ֆունկ-  
ցիաների ժամանակավոր թուլացում միայն, գործակալ-  
ների և ազիտատորների ժամանակավոր պակասություն։  
Հենց այդպիսի պակասություն է զգացվում այժմ և հար-  
կադրում և մի կոչով դիմել այն բոլոր զիտակից բանվոր-  
ներին և լինտելիզենտներին, վորոնք ցանկանում են իրենց  
բոլոր ուժերն ի սպաս դնել հեղափոխական գործին։ «Պայ-  
քարի միությանը» ազիտատներ են հարկավոր։ Վորևէ, հեղա-  
փոխական գործունեյության նույնիսկ ամենանեղ ասպարե-  
զում աշխատելու ցանկություն ունեցող բոլոր առանձին  
անձերը թող հայտնեն այդ մասին նրանց, վորոնք կապ  
ունեն «Պայքարի միության» հետ։ (Այն գեղքում, յեթե  
վորես խումբ չկարողանա գտնել այդպիսի անձերի, — վոր  
քիչ ե հավանական, — նա կարող է դիմել արասահմա-  
նյան «Ռուսական սոցիալ-դեմոկրատական միության» միջա-  
ցով։) Ամեն տեսակ աշխատանքի համար աշխատողներ են  
հարկավոր, և վորքան ավելի խիստ մասնագիտանան հեղա-  
փոխականները հեղափոխական գործունեյության առանձին  
ֆունկցիաների մեջ, վորքան ավելի շատ խորհեն նրանք  
իրենց գործի կոնսպիրատիվ լեզանակների և թագանելու  
մասին, վորքան ավելի անձնվիրությամբ խորասուզվեն  
մանր, աննկատելի, մասնակի աշխատանքի մեջ, — այնքան  
ավելի հուսալի կլինի ամբողջ գործը, ժանդարմներին ու  
լրտեսներին այնքան ավելի գժվար կլինի հայտաբերել հե-  
ղափոխականներին։ Կառավարությունն իր գործակալների  
ցանցով առաջուց պատել ե արգեն հակալառավարական  
տարրերի վոչ միայն ներկա, այլև հնարավոր, հավանական  
ոջախները։ Կառավարությունը լայնությամբ ու խորությամբ  
անշեղորեն զարգացնում ե իր ծառաների գործունելու թյու-  
նը, վորոք հալածում են հեղափոխականներին, նոր լեղա-  
սակներ ե հնարում, նոր պրովոկատորներ ե կարգում, աշ-  
խատում ե ճնշում գործադրել ձերբակալվածների վրա ահա-

բեկումներ կատարելու, սուտ ցուցմունքների, խարդախած ստորագրությունների, նրանց մոտ կեղծած գրություններ դցելու և այլ միջոցներով։ Առանց հեղափոխական դիսցիլինալինի, կազմակերպության և կոնսուլտացիայի ուժեղացման և զարգացման հնարավոր չե պարարել կառավարության դեմ։ Իսկ կոնսուլտացիան նախ և առաջ պահանջում և առանձին խմբակների և անձերի մասնագիտացում աշխատանքի առանձին փունկցիաների մեջ և միավորող գեր հատկացնել «Պայքարի միության» կենտրոնական միջուկին, վոր ամենափոքրաթիվն և լստ անդամների թվի։ Հեղափոխական աշխատանքի առանձին փունկցիաներն անսահմանորեն բազմազան են՝ հարկավոր են լիգալ ազիտատորներ, փորոնք կարողանան խոսել բանվորների մեջ այնպես, զորդը համար նրանց կարիք չլինի դատի տալ, վորոնք կաբուղանան ասել միայն ա, մյուսներին թողնելով ասելու ճ և ժրականության, թերթիկների տարածողներ են հարկավոր։ Բանվորական խմբակների և խմբերի կադակիրպիչներ են հարկավոր։ Թղթակիցներ են հարկավոր բոլոր զործարաններից և ֆաբրիկաներից, վորոնք տեղեկություններ տան սմբողջ անցողաբժիշկ մասին։ Լրտեսներին և պրովինցիաներին հետևող մարդիկ են հարկավոր։ Կոնսուլտատիվ բնականներ սարքողներ են հարկավոր։ Հանձնարարություններ գրականություն հանձնելու, ամեն տեսակ հարաբերություններ պահպանելու համար մարդիկ են հարկավոր։ Փող հաշաբողներ են հարկավոր։ Խնաելիցինցիալի և չինովիկության շշանում բանվորների, ֆաբրիկա-զործարանային ենցաղի, աղյուսական մարդարարացիայի (վոստիկանության, գործարային) տեսչության և այլն) հետ առնչություն ունեցող արդիկ են հարկավոր։ Ռուսաստանի զանազան քաղաքներ և մյուս լերկիրների հետ հարաբերություններ պահպանող արդիկ են հարկավոր։ Ամեն տեսակ գրականության մենիկական վերաբարեգրման տարբեր լեզանակները կազ-

մակերպելու համար՝ մարդիկ են հարկավոր։ Գրականությունը  
և մյուս իրերը պահպանելու համար մարդիկ են հարկավոր։  
Վորքան ավելի բաժանված, ավելի մանր լինի։ այն գործը,  
վոր իր վրա յե վերցնում առանձին անձը կամ առանձին  
խումբը, — այնքան ավելի շատ հույս կա, վոր նրան կհա-  
ջողվի մտածված ձևով գնել այդ գործը և առավելատպես ա-  
պահովել փորդումից, կշռադատել բոլոր կոնսպիրատիվ ժան-  
րամասնությունները՝ դործադրելով բոլոր հնարավոր միջոց-  
ները՝ խափանելու ժանդարմների զգոնությունը և նրանց մ. լո-  
րության մեջ զցիկու, այնքան ավելի հուսալի յե գործի հաջո-  
ղությունը, այնքան ավելի դժվար և վոստիկանության և  
ժանդարմների համար հետապնդել հեղափոխականին և նրա  
կապը կազմակերպության հետ, այնքան ավելի հեշտ կինք  
հեղափոխական կուսակցության համար ընկած գործակալ-  
ներին և անդամներին փոխարինել միուներով, առանց  
վլասելու ամբողջ գործին։ Գիտենք, վոր նման մասնագի-  
տացումը շատ դժվար բան ե, դժվար ե, վորովհետև այն  
առավել տոկունություն և անձնագոնություն և պահանջում  
մարդուց, պահանջում ե բոլոր ուժերը հանձնել անտեսանե-  
լի աշխատանքին, վորը միուրինակ ե, վորը զրկում ե ըն-  
կերների հետ հարաբերություն ունենալուց, հեղափոխակա-  
նի ամբողջ կյանքը լինթարկում ե չոր ու խիստ ռեվլա-  
մենտացիալի։ Բայց Ռուսաստանում միայն այդ պայման-  
ներում ե հաջողվել հեղափոխական պրակտիկայի կորիֆեր-  
ներին իրագործել ամենավեհասքանչ ձեռնարկումներ, տա-  
րիներ սպառելով գործի ամենակողմանի պատրաստման վրա,  
և մինք խորապես համոզված ենք, վոր սոցիալ-դեմոկրատ-  
ները պակաս անձնագոնություն չեն ունենա, քան նախըն-  
թաց սերնդի հեղափոխականները։ Գիտենք նաև, վոր մեր  
առաջարկած սիստեմով շատերին, վորոնք ավյունով իրենց  
ուժերը նետում են հեղափոխական աշխատանքի մեջ, շատ  
դժվար կինք նախապատրաստական արձանը, մինչև վոր

«Պայքարի միությունը» պատշաճ տեղեկություններ կհավաքի իր ծառայությունն առաջարկող անձի կամ խմբի մասին և կփորձի նրա ընդունակությունն առանձին հանձնարարություններով։ Բայց առանց ալիք սկզբնական փորձության անկարելի յև հեղափոխական գործունեյություն ժամանակակից Ռուսաստանում։

Մեր նոր ընկերներին առաջարկելով գործունեյության այսպիսի սիստեմ, մենք առաջադրում ենք դրություններ, վորոնց հանգեցրել ե մեզ լերկարատև փորձը, խորապես համոզված, վոր հեղափոխական աշխատանքի հաջողությունն ամենից ավելի ապահովված ե այս սիստեմով։

Գրլած և աժառում  
1897 թ, վերջին:

Տպագրված և Յերկերի ուսուց. 2-րդ  
երան. տեխնիկ, հատ. II,  
էջ 171 — 190:

Յեխ. խմբազիր՝ Մ. Եֆրիկ  
Սրբազնություն Ա. Տ. ՄԿՐՏՉՅԱՆ  
Հանձնված և արտադրության 13 նոյեմբերի 1932 թ.  
Ստորադրված և տպելու 19 գեկտեմբերի 1932 թ.  
Տիրած 3000, Հրատ. № 50 69,000 տպ. 02.

Պետքատի տպարան

Պատկեր № 3460

Գլանիս 7688 (թ.)

ՀՀ Ազգային գրադարան



NL0178163

ՀԻՆԸ 20 Կ.

В. И. Ленин

Задачи русских социал-демократов

Партиздан — 1932 — Эривань